ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԶԵԿՈՒՅՑ

Արմավիր քաղաքի կանաչ տարածքների զարգացումը և պահպանումը

Մոնիթորինգը իրականացվում է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ «EmpowerYouth. Երիտասարդներին հուզող հարցերի շուրջ որոշումների կայացման գործում երիտասարդական կազմակերպությունների կարողությունների զարգացում» Էրազմուս+ ծրագրի շրջանակներում:

Արմավիրի համայնք, Արմավիրի մարզ

Թիմ՝ ECO դիտարկում
Լիլիա Դավթյան · Ռիմա Տոնյան · Արմեն Սաֆարյան

ECO Դիտարկում

Թիմի մասին

Լիլիա Դավթյան

17 տարեկան

«Դիմակայենք կլիմայի փոփոխությանը» մրցույթի 3-րդ մրցանակակիր, հետազոտություն կանաչապատ տարածքների զարգացման թեմայով, Erasmus+ «Green me» ծրագրի մասնակից

Ռիմա Տոնյան

17 տարեկան

Մասնակցել է բնապահպանական քննարկումների և ծառատնկման նախաձեռնությունների, ներգրավված է համայնքային կանաչապատման աշխատանքներում

Արմեն Սաֆարյան

16 տարեկան

Ակտիվ մասնակից բնապահպանական քննարկումների և ծառատնկման ծրագրերի, կենտրոնացած կանաչ տարածքների զարգացման վրա

Թիմի մենթոր՝ Արմավիրի երիտասարդների տուն բաց երիտասարդական կենտրոնի երիտասարդական աշխատող Լիլիթ Գևորգյան

Ներածություն

Մոնիթորինգի հիմնական նպատակը

Գնահատել Արմավիր քաղաքում կանաչապատմանն ուղղված հանրային քաղաքականության, ոռոգման ենթակառուցվածքների և սուբվենցիոն ծրագրերի իրականացման ընթացքը՝ նպաստելով ՏԻՄ-երի թափանցիկության բարձրացմանը:

Ինչո՞ւ ընտրվեց այս թեման

Կանաչ տարածքների զարգացումն ու պահպանումը հանդիսանում են համայնքի կայուն և ապահով զարգացման նախապայման. թեման արտացոլում է հանրության աճող հետաքրքրությունը շրջակա միջավայրի հարցերի նկատմամբ և կանաչ ներդրումների թափանցիկության անհրաժեշտությունը:

Մոնիթորինգի խնդիրները

- Իրավական և բյուջետային հիմքերի ուսումնասիրություն
- Փաստացի վիճակի գնահատում
- Թափանցիկության և հաշվետվողականության ստուգում
- Հանրային կարծիքի վերլուծություն
- Առաջարկությունների մշակում

Մոնիթորինգի ենթարկված ծրագրերի ընդհանուր ներդրումը՝ **~210,5 մլն ՀՀ դրամ** (ՏԿԵՆ 2024թ. սուբվենցիոն միջոցներ)

Օգտագործված մեթոդներ և գործիքներ

Փաստաթղթերի վերլուծություն

ՀՁԾ, ՏԱՊ և ՏԿԵՆ սուբվենցիոն հաշվետվություններ

Առցանց տվյալների որոնում

Պաշտոնական հարթակների դիտարկում և վերլուծություն

Տեղեկատվության հարցումներ

Պաշտոնական դիմումներ Արմավիրի համայնքապետարանին

Հարցազրույցներ մասնագետների հետ

Հանդիպումներ ինստիտուցիոնալ ներկայացուցիչների հետ

Հանրային հարցում

Սոցիոլոգիական հարցում՝ 2026թ. մայիս-հունիս ամիսներին

Շրջակա միջավայրի ցուցանիշների վերլուծություն

Էկոլոգիական և աշխարհագրական տվյալների համադրում

Հանդիպումներ ՏԻՄ ներկայացուցիչների և մասնագետի հետ

14.05.2026

Աշոտ Գրիգորյան

ԱՏՊՔ քոլեջի դասախոս, բ.գ.դ.

Էկոլոգիական տվյալներ քաղաքի կանաչ ֆոնդի, կլիմայի և ոռոգման աղբյուրների մասին. արձանագրվեց 600 հա անտառահատումների ազդեցությունը ստորերկրյա ջրերի վրա

02.06.2026

Սևակ Ֆիզրիկյան

«Կանաչապատում» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն

Ներկայացվեցին ընթացիկ գործողությունները կանաչ տարածքների պահպանման ուղղությամբ, ձևավորվեց հետագա համագործակցություն

09.06.2026

Նոյեմի Խաչատրյան

ՏԻՄ ներկայացուցիչ

Ամփոփվեցին իրականացված աշխատանքները, քննարկվեցին ոռոգման հին համակարգերը և կաթիլային ոռոգման ներդրման հեռանկարները



|Շնորհակալություն համագործակցության համար՝ Արմավիրի համայնքապետարան, «Կանաչապատում» ՊՈԱԿ և ԱՏՊՔ քոլեջ

Իրականացված սուբվենցիոն ծրագրեր

Կենտրոնական հրապարակի շատրվան

169,5 մլն ՀՀ դրամ

Նոր մոնոլիտ կոնստրուկցիա (91.42 քմ), բազալտե երեսպատում (207.34 գծմ), լուսաձայնային համակարգ · ավարտվել է 2024թ.

Հանրապետության փողոցի ոռոգում

41 մլն ՀՀ դրամ

2900 գծամետր նոր պոլիէթիլենային ջրագիծ՝ կենտրոնական հրապարակից մինչև Երևանյան փողոց · ավարտվել է 2024թ.





Շրջակա միջավայրի որակի ցուցանիշներ

4 հա

Կենտրոնական զբոսայգի և պուրակներ

2 հա

Բուսաբանական և կենդանական այգի

600 հա

Պատմականորեն հատված անտառներ

Ոռոգման ջրի աղբյուրների հարաբերակցությունը



Հիմնական դիտարկումներ

- Քաղաքը գտնվում է չոր կիսաանապատային գոտում
- Անտառահատումների հետևանքով նվազել է օդի խոնավությունը և ստորերկրյա ջրերի մակարդակը
- 2900 գծամետր նոր ոռոգման ջրագիծ է անցկացվել Հանրապետության փողոցում
- Բնակիչները հիմնական խնդիրներ են համարում աղբոտվածությունը և խնամքի պակասը

Հանրային հարցում և երիտասարդների ներգրավվածություն

Հարցման հիմնական մարտահրավերները (2026թ. մայիս-հունիս)

1. Աղբի առկայությունը
2. Ոռոգման համակարգի բացակայությունը/խնդիրները
3. Խնամքի պակասը
4. Բնակիչների անփույթ վերաբերմունքը
5. Կառուցապատումը կանաչ գոտիների հաշվին

Երիտասարդների ներգրավվածությունը

- Հարցմանը մասնակցածների ճնշող մեծամասնությունը երիտասարդներ են (մինչև 18 և 18-25 տարեկան)
- Առաջարկվել են միասնական ծառատունկեր և կամավորական աղբահավաք-խաղեր
- 18-25 տարիքային խումբը կողմ է փոքր, հասանելի կանաչ այգիների ստեղծմանը բակերում
- ՏԻՄ մակարդակում պաշտոնական խորհրդակցությունների մեխանիզմները դեռ բավարար հասանելի չեն

Մոնիթորինգի փաստարկները և արդյունքները

Ներդրումների կատարում

Ուսումնասիրված սուբվենցիոն ծրագրերն իրականացվել և ավարտվել են նախատեսված պլանների համաձայն, սակայն բաց է մնում երկարաժամկետ սպասարկման հարցը

Թափանցիկության մակարդակ

ՏԻՄ և համայնքային կառույցների համագործակցությունը գնահատվում է բավարար, սակայն անհրաժեշտ է բյուջետային տվյալների առավել հանրամատչելի հրապարակում

Քաղաքացիների ներգրավվածություն

Ցածր ինստիտուցիոնալ ներգրավվածություն՝ բնակիչները հիմնականում միայն «մասամբ» են տեղեկացված պաշտոնական խորհրդակցություններից

Ռազմավարական կարիք

Անհրաժեշտ է անցում չորադիմացկուն ծառատեսակների և խիստ վերահսկողություն ստորերկրյա ջրերի սպառման նկատմամբ

Առաջարկություններ ՏԻՄ ներկայացուցիչների համար

1. Երիտասարդների ինստիտուցիոնալ ներգրավում որոշումների կայացման մեջ («Երիտասարդական էկո-խորհուրդ»)
2. Բակային և միջշենքային տարածքների կանաչապատման խթանում («Լավագույն կանաչ բակ» մրցույթներ)
3. Թափանցիկության բարձրացում. հանրամատչելի «Կանաչ քարտեզ» և բյուջետային հաշվետվություններ
4. Ռազմավարական անցում չորադիմացկուն դենդրոֆլորայի և խիստ ջրային վերահսկողության
5. Հանրային իրազեկման սեմինարներ և վարչական պատասխանատվության խստացում

ECO Դիտարկում

EMPOWERYOUTH

Երիտասարդներին հուզող հարցերի շուրջ որոշումների կայացման գործում երիտասարդական կազմակերպությունների կարողությունների զարգացում»

Թիմ ECO դիտարկում

Տոնյան Ռիմա Լիլիա Դավթյան Արմեն Սաֆարյան